

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԵՂԻՇԷ վարդապետ, Թարգմանութեամբ Հ. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ. — օղիշէի պատմ. վարդանի և Հայոց պատերազմի համար, Թիֆլիս, 1891 թ.

Հայր Խորէն Ստեփանէի Խորենացու պատմութեան Թարգմանութիւնից լսող, առժամանակ կարծես մոռացութեան տուեց մեր հին դասական մատենագիրների Թարգմանութիւնը. մօտ ժամանակներս ասպարէզ եկաւ պ. Հ. Ղուկասեանց Նիշէի՝ հինգերորդ դարի աղբ փալուն աստղի պատմութեան Թարգմանութեամբ: Մեր հասարակութիւնը, նոյն իսկ նորա ինտելիգենտ ներկայացուցիչներից շատերը, չեն կարող անմիջապէս օգտուել մեր հին մատենագիրներով. գրաբառ լեզուի ուսումնասիրութիւնը վաղուց տեղի է տւել աշխարհաբառի ուսումնասիրութեանը. մինչև իսկ դպրոցներից ալժմ հետզհետէ գրաբառը զուրկ է ընկնում, բացի մի քանի թեմական դպրոցներից: Ժողովուրդը կարողում է աշխարհաբառ հասկանալի գրածքներ, իսկ գրաբառը գառել է փոքրաթիւ մարդկանց սեպականութիւն: Աղբ պատճառով առանձին շնորհակալութեան արժանի են նոքա, որոնք աշխատում են աղատել մեր ընտիր.

մատենագիրների թանկագին փառապանքները մատենադարանների անկիւններում փոշոտելուց, զուրս են ընթում ուսումնարաններից և մասնագէտների կաբինէաներից և աշխարհիկ կենդանի լեզուով տարածում են ժողովուրդի մէջ, դնում են ամեն մարդու սեղանի վրայ:

Նթէ առհասարակ Թարգմանութիւններ պէտք է անել առանձին խնամքով և զգուշութեամբ, եթէ Թարգմանութիւնը կարդալով ընթերցողը կարգացած պէտք է լինի իսկական հեղինակի գրածքը, աւելի ևս խնամք և զգուշութիւն է հարկաւոր դասական հեղինակները, մանաւանդ պատմական գրածքները Թարգմանելիս. նոցա մտքերը նույնութեամբ պէտք է հաղորդեն ընթերցողներին Թարգմանութեան միջոցով:

Մենք որքան ենք ցաւում, որ հին ձեռագրերի մէջ ազգային գրիչների շնորհիւ փոփոխութիւններ են առաջ եկել, որքան դժուարացիւ են նոքա պատմութեան ուսումնասիրութիւնը, մեր ունեցած սեղեկութիւններից

արդեօք որքանը սխալ են, հերքւում են պատմական քննատատուութեամբ։ Այս ամենը ցոյց են տալիս, որ թարգմանիչը պէտք է վերաբերւի վերին աստիճանի զգուշութեամբ իւր ձեռնարկած գործին, պէտք է թարգմանէ նույնութեամբ, առանց մի բան աւելացնելու կամ պակասեցնելու, իսկ եթէ իբրեւ ծանօթութիւն, միտքը պարզելու համար՝ անհրաժեշտ է լինում մի բան աւելացնել կամ պակասեցնել, ալդ պէտք է նկատելի անէ գրաժքի մէջ։ Նշելի թարգմանութիւնը կատարել է ոչ թէ մի նորուս համբակ, ալ մի մարդ, որը, ինչքան մեղ չալտնի է, երկար տարիներ պարապել է հայոց լեզւի դասաւանդութեամբ, ուստի և նորանից պէտք էր սպասել լաջող թարգմանութիւն։ Դժբաղդարար պ. Ղուկասեանը դործին աչնպէս չէ վերաբերւել ինչպէս սպասելի էր։

Մի քանի նախադասութիւնների անճիշտ թարգմանութիւնից մտքի մէջ փոփոխութիւն է առաջ եկել։

«Նւ իբրեւ զնա ես մերժեաց (Յաղկերտ) ի թաղաւորութենէն»։

«Նւ երբ նորան էլ թագաւորութիւնից դրկեցին»։ (եր. 13)։

Նշելին որոշ ասում է, որ Յաղկերտ մերժեց նրան թագաւորութիւնից։

Որ. Ղուկասեանը թարգմանում է դրկեցին, որով միտքն անորոշ է մնում։

«Հաճոյ թւեցաւ խորհուրդն թաղաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի»։

«Այս խորհուրդը հաւանեցին թէ թագաւորը և թէ միւս մեծամեծ

խորհրդականները» (եր. 17)։ Որ էին ի նմին բանի երկու կերպ է հասկացւում, որ նույն խորհրդի մէջ էին, որ նույն խորհրդին համաձայն էին։ Թարգմանութիւնը պէտք է լինէր՝ աչն մեծամեծները, որոնք նույն խորհրդի մէջ էին։

«Խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ»։

«Խօսում էր նոցա հետ սիրով (եր. 27)։

Ի պատճառս սիրոյ նշանակում է սիրով պատրւակով։

«Ջառաջեաւ դատեալ բաղում հարուածովք»։

«Առաջ առաջ շատ թակեցին նոցա» (եր. 30)։ զառաջեաւ տեղական նշանակութիւն ունի ե նշանակում է առջևը, դէմը. զառաջեաւ արքայի, զառաջեաւ բայեք նշան. պ. Ղուկասեանը թարգմանում է իբրեւ ժամանակական մակբայ. Դատեալ բաղում հարուածովք ընդհանուր նշանակութիւն ունի. դորանից չի հասկացւում թէ միայն թակեցին։

«Ընդ նովին աշխարհագրով էարկ»։—«ն ուն պէս աշխարհագրի տակ ձգեց»։ Նույն ածական է, որի գործիական հոլովն է նովին. չը գիտենք զա ինչպէս է թարգմանւել նույն պէս։

«Յաղմ չէր արժան ջեզ խորչեւ և փախչել»։

«Ալդ էլ չը պէտք է խորթ թւի ջեզ»։ Թարգմանական նախադասութեան միտքը շատ թուլ է։

«Նւ ի դորա չերկար խաղաղութեան և մեք առողջ»։

խեամբ և աստուածապաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր»:

«Եւ մենք կարողանանք առողջութեամբ և աստուածապաշտութեամբ անցկացնել մեր կեանքը խաղաղութեան մէջ մինչև վերջը»:

Հալերի միտքն ալն չէ թէ իրանք խաղաղութեան մէջ ապրեն, ալ, թագաւորի երկար խաղաղութեան շնորհիւ իրանք էլ կարողանան ապրել. նախընթաց առդերն աւելի են պարզում:

«Այդօր առնել վասն կենաց թաղաւորի և անձանձրութիւն խնդրել լիստուծոյ վասն երկալն ժամանակաց գորա, զի խաղաղութեամբ վարեսցէ զտիւղեբրական իշխանութիւնդ զոր աւանդեալ է դմա լիստուծոյ. զի ի զորա չերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածապաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր»:

«Եւ զարարած օ առանց ապականութեան ծնաւ»:

«Բոլոր աշխարհն առանց ապականութեան ծնաւ»:

Ի կալ մեալն Աստուած».— «Աստուած դարձած ժամանակը»։ «գունդ կաղմէին»։— «պատրաստութիւն էին տեսնում»:

«Եւ զեկեղեցիս և զոր անւանէք վկալարանս, քակեցից»:

«Եկեղեցիներն ու վկալարանները կը քանդուին»։ զոր անուանէք թարգմանութեան մէջ բաց է թողնւած, ուստի և միտքը բոլորովին չի արտաբերուում թարգմանա՝ ի մէջ զոր անուանէք ցոյց է տալիս աստղի սղիտութիւնը, որ նա վկա-

լարան խօսք լաւ չէ իմացել, կամ հեղեղութիւն է արտաբերուում Ազգային խօսքերը բաց թողնելիս նախադասութիւնը կորցնում է մտքի նրբութիւնը:

«Զմի ոմն դևսպան ձիով առաքեցին փութապէս լաշխարհն հալոց»։ «չուտով մի ձիաւոր ուղարկեցին հալոց աշխարհը»:

Ձիաւոր չի նշանակում դեսպան. իսկ Նիլիէն որոշ ասում է դեսպան. «Ամենքեան զգլուխ զգետնի հարկան էին»։ — «ամենքն էլ ծուներ զրին գետնի վրայ»։ ծուներ գնել շատ քիչ է:

«Խառնէին ի զօրս նոցա»։— «խառնուում էին նոցա հետ»:

«Ի ձեռն գաւաղանին գործէր զմեծամեծ սքանչելիոն»:

«Ձեռքի գաւաղանով մեծամեծ հրաշքներ գործեց»:

Ոչ թէ ձեռքի գաւաղան ո՞ր, ալ գաւաղան ի միջոցով:

«Հատան պատգամաւորքն ի միջոյ խաբել դնոսա» (դհալ)»:

«Հնար չը մեաց պատգամաւորն երի միջոցով հալերին խաբելու»։ Պէտք է լինի՝ ունենալից պատգամաւորները վերջացան հալերին խաբելու:

«Մեալը գալանացն Արտաշրի»։ «շտապեցնում էր Արտաշրին իւր փղեբով»։ սխալն ակնալստի է:

Բացի ալս, շատ նախադասութիւններ մատաւորապէս են թարգմանւած, որոնք բոլորը մի առ մի մենք չենք կարող բերել, իրրև օրինակ կը բերենք մի երկուսը միայն:

«Զի եթէ պղնձի մարմինք

«Լն էին նորա», «եթէ պղնձի մարդիկ էլ լինէին»:

«Որոչ (Միհրնեբոսի) ձախող իրանց իսկ բռնուն հարեալ էր նորա»:

«Որի ձախողակ խորհրդին ալն պէս սլինդ հետնում էր:

Բռնուն հարկանել նշանակում է ձեռնարկել:

«Սթէ դունդ հատաւ թշնամեացն»:

«Թէ թշնամիների դօրքը մտել է»:

Մենք գուցէ ձանձրութիւն պատճառէինք ընթերցողներին եթէ երկաշ ալնպիսի մանրամասնութիւնների լետնից ընկնէինք. ալժամ տեսնենք, թէ որքան բառեր միանգամալն ուրիշ կերպ է թարգմանում այ. «Ղուկասեանը»:

«Ձշին ալանսն վատեացէ».—

«շէն մարդկանց փշացնէր»:

«Ձախտս և զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար»:

«Դե երբ և հիւանդութիւնները և մահը Արհմն է ստեղծել»:

«Աչրն ձի գումարեցէք».—«զօրք գումարեցէք»:

Ձօրք ընգհանուր նշանակութիւն ունի, իսկ աչրն ձի զօրքի մի տեսակն է— հեծելազօր:

Դեհապետ—տիրապետ. դեն—կողմ. դեհապետ—կողմնապետ կուսակալ:

«Յետ ալսր մեծի վկաչութեան».—«այս մեծ բարութիւնից լետու»:

Խոնաստան—ատեան. ամեն ատեան խոնաստան չէ. աղպէս անւանում էր միալն պարսից թագաւորի ատեանը. ինչպէս պարլամենտ, սենատ:

«Որք հաչոչէին» — «որոնք նախատում էին»:

«Բազում գործեալ էր նախճիրս».—«չատ չարիքներ էր գործել». նախճիր նշանակում է արիւնհղութիւն և այս նախադասութեան մէջ չի կարելի չարիք թարգմանել. ալդ երևում է հետեւալ տողերից. «որոչ կերակուր կամաց խրոց էր ի մանկութիւնէ անարատ մարմին սրբոց և ըմպելի անկաղութեան նորին արիւն անմեղացն»:

«Անկանէին ի տեղիս չարմարս աշխարհին և բռնանալին ի վերալ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնու իսկ ոք կարէր»:

«Քաշեցան երկրի դանադան ամրոցները, որտեղից և չարձակւում էին քռնութեամբ շատ գաւառների ու բերդերի վերալ, որոնց ոչոք չէր էլ կարողանում առնել»:

Բռնացան այ. Ղուկասեանը թարգմանում է բռնութեամբ չարձակում էին. Հալերը պատերազմից լետու քաշեցին ամրացան հալոց և դուզարաց անմատչելի լեռնագաւառներում. երբեմն դուրս էին գալիս կռիւ անում թշնամու հետ և դարձեալ քաշւում իրանց լեռներն ու ամրոցները: Բռնացան Նղիշէն գործ է ածում ամրանալու մըտքով, ալսալս:

«Բռնացան ի վերալ բազում ամրոցացն»:

«Բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն»:

«Դեռ ևս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին»:

Վերջին երկու նախադասութիւն-

ների մէջ բռնանալ ճիշտ է թարգմանած՝ «իւր ձեռքն էր առել թագաւորանիստ տեղերը»:

«Դեռ ես բռնած էին երկրի ամբողջութիւնները»:

Վասակի մասին Նզիշէն ասում է. «Իբրեւ զէշ քարեցաւ»:

Պ. Ղուկասեանը թարգմանում է «քարէ տրեցաւ իբրեւ զէշ», «զտիեզերական իշխանութիւնն» — «լաւնաժառանգ պետութիւնը» — «զի վաղիւ անդ Մովսէսեան Մովսէսեան ռատ, չազէն». «վաղն ալնտեղ մեծիմաստ Մովսէսեան Մովսէսեան պաշտօն է մատուցանելու»:

Յաղել նշանակում է զոհել, զոհ մատուցանել:

Նթէ պ. Ղուկասեանը հալոց լեզուով երկար պարապած չը լինէր, աւալիսի սկնպտնի սխալները կարելի էր վերագրել նորա անգիտութեանը. ալդպէս ենթադրել զժառէ, Իսկ թէ ունեցել է արդեօք որոշ նպատակ ե գիտակցօրէն է մտցրել ալդպիսի փոփոխութիւններ, թարգմանութեան մէջ չի երեւում, որովհետեւ բառերը իսկական նշանակութեամբ չը թարգմանելու ոչ մի արհրաժեշտութիւն չը կար. Բնչ կը կորցնէր թարգմանութիւնը, եթէ, օրինակ ախտ—դէ չը թարգմանէր, էշը՝ զէշ, շինականը՝ շէն մարդ, վկայութիւնը՝ բարութիւն:

Տեղ-տեղ բառեր, հոգն իսկ ամբողջ նախադասութիւններ բաց են թողնւած, տեղ տեղ էլ, ընդհակառակը, աւելցրած:

«Ի խորհուրդ կոչէր զպաշտօնեակս ձախակողմեանն»:

«Խորհրդի էր կանչում ձախակող-

մեան չարամիտ պաշտօնեաներին. խաղացին դնացին լիւրաքանչիւր «աշխարհաց լրջ մտութեամբ և անտրտում խնդութեամբ և տիրասէր խորհրդովք, կատարեալ զսպաս զինուորութեանն»...

«Ամեն իրանց աշխարհից ուրախութեամբ վեր կացան գնացին, մատուցանելով ինւորական ծառայութիւնն»:

«Մեծապալծառ վարդապետութեամբ չալտ չանդիման մեծ իրանակին զպաշտօնն ցուցանել»:

«Մեծապատիւ վարդապետութեամբ իրանց պաշտօնը կատարել»:

«Ձեռս լետս կապելով և զխոնջանանս կնքելով»:

«Ձեռները լետները կապտեցին ե կապերը կնքեցին». երեւանպատշաճ է համարում խոնջան բառը զործածել:

«Ստնպէս և զհատտն որ ի Գրիսմոս, ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսէն Հռովմայ»:

«Ի սուրբ եպիսկոպոսէն Հռովմայ բաց է թողնւած առանց որ և է ծանօթութեան (եր. 94), Թէ արդարեւ Տրդատ Հռովմի եպիսկոպոսից է ընդունել քրիստոնէութիւնը թէ ոչ, դա պատմական քննադատութեան խնդիր է. Թարգմանիչը պարտական է նույնութեամբ թարգմանել ինչ որ գտնում է մատենագրի մէջ. իսկ եթէ ինչ ինչ դիտումներով աւելորդ է համարում, դուրս է ձգում, ալդ մասին պարտական է բացատրութիւն տալ:

«Յաշխարհն լունաց, ի մեծ քաղաքն»:

Յունաց աշխարհը, մեծ քաղաքն Կ. Պոլիս:

«Լս հալեցուց զնա ի կարծիս սնո-
ախ, որ ի վեր էր քան զիւր
տէրու թիւնն, իբր թէ անկէ»:

«Այնորա միտքը դարձրեց ալնպիսի
սնոտի կարծիքի վերալ, իբր թէ»...

«Փոխանակ չետս կացեւոցն,
որ ելին զհետ իշխանին Սիւնեաց»:

«Սիւնեաց իշխանի չետնից զնա-
ցածներն փոխանակ»:

«Ոչինչ լիշէին զհեղու թիւնսն, որ
անցեալ էր ընդհոսա, և կամ որ
ալլ ևս ալնկալու թիւն էր
գալ ի վերալ, ալլ զարմացեալ
էին»...

«Չէին վշուով բնաւ իրանց գլխովն
անցած նեղութիւններն, ալլ զարմա-
ցել էին»:

«Եւ ծակոսեցան շրթունք նորա»
բաց է թողնած:

«Ջոր ժողովէր, գունդ կաղ-
մէր ելանել նմա ընդ առաջ»:

«Ջորք ժողովեց, որ դուրս գալ
նորա առաջ»:

«Թ ու ժ էին զարմացեալ ընդ ա-
ռողջութիւն անհրաժեշտութեան նոցա,
իբր և լսէին զանդադար հըն-
չումն ձալնիցն, վասն ալնորիկ»:

«Ջարմացած էին մնացել նոցա
պնդակաղմ առողջութեան վրալ, ալս
պատճառով»...

«Բաղուով բարեխօսիւքն, զոր ու-
նիմք առ նա, ոչ չիջանի վա-
ռումն կանթեղաց ձերոց, և
ոչ ուրախ լինի խաւարասէր թշնա-
մին կենաց ձերոց»:

«Շնորհիւ ալն բազմաթիւ բարե-
խօսներն, որ ունինք նորա մօտ, չի
ուրախանալ ձեր կեանքի խաւարա-
սէր թշնամին»:

«Է ցաւ, որ ուում գտանին

հնարս առողջութեան և է, որ
ապստամբ է ի հնարից նոցա, վասն զի»:

«Յաւ կալ, որ ոչ մի հնարքով չի
բժշկուում, ըոտ որում»...

«Ի քեզ տեսանմա և զաշխարհիս
շինութիւն խաղաղութեամբ, քն եկե-
ղեցիքն մեր ցնծացեալ բերկրին, և
քն սուրբ վկայքն մեր»...

«Քեզանում մենք տեսնում ենք
մեր աշխարհի շինութիւնը խաղա-
ղութեամբ, քեզանով մեր սուրբ նա-
հատակներն»...

Մենք բաւականում ենք ալս-
քանով, մանրամասնութիւնները թող-
նելով աւելի հմուտներին նկատելու:
Մեր բերած օրինակներից ընթեր-
ցողը պարզ կը տեսնի, որ Նդիշէի
թարգմանիչը եթէ ոչ անհոգ կեր-
պով, գոնէ շտապովի է կատարել
գործը: Մենք զարմանում ենք ալս
պիսի թերութիւնների վրալ մանա-
ւանդ ալն պատճառով, որ Նդիշէի
պատմութիւնը մեր նախնի մատե-
նադրութեան մէջ ամենապարզ և
հնչտ հասկանալի դրաձներն է,
ազատ խրթին և մութ ձևերից:

Թարգմանութեան մասին վեր-
ջացրած լինելու համար աւելացնենք,
որ պ. Ղուկասեանը շատ ժլատ է
ծանօթութիւնների վերաբերմամբ.
ալն բառերը, որոնք հնախօսական
նշանակութիւն ունին և որոնց ի-
մաստն ալժմ սլարդ չէ ընթերցողների
մեծամասնութեան համար, պէտք է
ծանօթութեամբ բացատրել: Այսպիսի
բառերից են խոնաստան, փանդամ,
գումիզ, հրասախ, համակղէն, փաշ-
տիպան, կապճաթիւ, մոխրաչափ
կարգ և ալն. Այս բառերի մասին
ծանօթութիւն տալ անհրաժեշտ էր

աւելի ակն պատճառով, որ քետագալ զարերի մատենագիրներին մէջ պարսից հին կրօնի վերաբերեալ ալպիսի բառերի ալեքան չենք հանդիպում:

Մեր նկատողութիւնները վերջացնելու համար մի ակնարկ ձգենք պ. Ղուկասեանի Նղիշէի պատմութեան աշխարհաբառ լեզւի վրայ: Որ ե է օտար լեզւից հալերէն թարգմանելիս պէտք է աշխատել, որ թարգմանութիւնը, որքան կարելի է, ազատ լինի օտար լեզւին լատով ոճերից ու զարձաձեւերից և համապատասխանէ հալերէն լեզւի ոգուն, ալսպէս և հալերէնից ուրիշ լեզուների, ե մի որ է լեզւից ուրիշ թարգմանելիս. ալսպէս և գրաբառից աշխարհաբառ թարգմանելիս: Շատ անգամ ալս պահանջը լրացնելու համար թարգմանիչն հարկադրած է լինում տեղ-տեղ ճշդութիւնից հեռանալ, մօտաւորապէս թարգմանել, աւելացնել ու պակասեցնել, որին ասում ենք ռէ բառացի, ալլ ազատ թարգմանել: Տեսանք, որ Նղիշէի թարգմանութիւնը բաւական ազատ է. արդեօք ալլ ան Նպատակով է արած, որ թարգմանական լեզուն ազատ լինի գրաբառի կաշկանդումներից: Աշխարհաբառ Նղիշէն կարգալիս համարեա ամեն երեսի վրայ կը նկատէք գրաբառ լեզւի ձևեր: Սրինակներ ալեքան շատ են, որ ընտրութիւն անել դժւարանում ենք:

Վրաբառ հոլովման ձևեր.—Արենցւոց, քաղէացւոց, հողւոյն, ոսկւով, Մարդազուկ եպիսկոպոս, դատւով, մատանով, բաբելացւոց և ալլն:

Յալտնի է, որ է վերջացող բառերի սեռական հոլովը աշխարհիկ լեզւում վերջանում է *ա*, գործիականը *ի* հոգու, որդու, մատանով:

Ալլպէս գործ է զնում և պ. Ղուկասեանը. եկեղեցու, հողուն և ալլն. ուրեմն գրաբառի ձևը նա աշխարհաբառի համար կանոն չի ընդունում: Հետեալ հոլովները նույնպէս խորթ են աշխարհաբառում—ցաւովք, զեկուցմամբ, շարժմանց, բոլորեցունցս, լուսոյ նշույլ, դարու, մահու, սիրոյն, լուսոյն, մտօք, ամենեցունց, չնորհաց պարզն, հաւատոյ աչք, մարմնոյ, ամենեքեան.—պատուզ գգեստ, և ալլն և ալլն:

Ալլպէս և բալերը.—իփսեցաւ, լաջողեցաւ, ապստամբեցաւ, երևեցաւ, պատրաստ կացին, պնդեցան, նախեցաւ, պարտեցաւ, անկաւ, ուսուցին, միաբանեցաւ: Նթէ բոլոր օրինակները բերելիք, երևաներ բաւական չէին:

Հետեալ ձևերը ալթմեան գրական աշխարհիկ լեզւում արդէն գործածութիւնից ընկել են. փոխեցաւ առ Տէր, իրանց վախճանին ակն ունենան, չորրորդ տարուց մինչև մետասան երորդ տարին, իսկ անօրէնն յշխան Յաղկերտ երբ իմացաւ. ակն ունն լով աչն մեծ չուսոյն, ըստ մարմնաւոր կարգի շարագոյն նա է, վասն որոյ իրանց անձը... անձամբ անձին, նոյն ժամաչն, վասն զի նորա զօրութիւնը շատ կոտորել էր. վասն որոյ և բողոքեցին առ թագաւորի դուռն: Յառաջագոյն լսել էիք. սոքա վեցեքեան ուղարկեցին:

Աշխարհաբառում կուս, լուս, լուս, գոլն և ալլն բառերի ոչ երկբարբառը սեռականում և միւս հոլովներում մնում է անփոփոխ. ալսպէս. լուս, լուսի, և ոչ լուսի. գոլն, գոլնի, և ոչ գոլնի, թոլն, թոլնի և ոչ թոլնի. փոխւում է ու բարդելիս և անանցելիս. լուսաւոր, լուսահատ, թունալից և ալլն. պ. Ղուկասեանը գործ է ածում, հացկերութի. կուսից և ալլն.

Նրբ հնթական հաւաքական գոյական է, ստորոգեալը գրւում է եզակի թուով. պ. Ղուկասեանը գրում է՝ ժողովում է ին մնացած գուռնգը. հաւաքւեցան անթիւ բաղմութիւն. մեծ բաղմութիւն և կան հասան.

Յղանալ բալը հացական հոլովով լրացուցիչ է պահանջում. միտք չղանալ, խորհուրդ չղանալ, չարութիւն չղանալ. և ոչ չղանալ երկու զաւակով, ինչպէս գտնում ենք աշխարհաբառ Նղիշէի մէջ, Աստած կնոջից ծնաւ. հապա Մարիամ Յիսուսին ծնաւ թէ ծնեց, Պէտք է լինի. Աստած կնոջից ծնեց, Մարիամ ծնաւ Յիսուսին.

Պ. Ղուկասեանը գրում է՝ աշխատում էր հաստատելու, աշխատեց իմանալու, լանձն չաւան ուտելու. Մեր գրողներից չատերը չիոթում են թէ որ գէպքերում անորոշ դերբալը պէտք է գրել սեռական հոլովով, որ գէպքերում ուղղական. Մեր բերած օրինակներում պէտք է լինի ուղղական հոլով. աշխատել մի բան անել, և ոչ անելու, լանձն առնել մի բան և

ոչ մի բանի. ալսպէս, աշխատում էր հաստատել, աշխատեց իմանալ և ալլն. Ընդհակառակն, հետեւալ օրինակներում պէտք է լինի սեռական հոլովով. հրաման ունենք դիզելում և քաղաքներում աւարուշաններ չինել, սովորութիւն ունենք քահանաներ պահել. արժանի եղաւ ստանալ, արժանի չ'եղան հաւասարւել, Պէտք է լինի լինելու, պահելու, ստանալու, հաւասարւելու.

Աշխարհաբառ Նղիշէի մէջ աչքի է ընկնում և տառի չափազանց և անտեղի գործածութիւնը, թէ որ բառերի վերջը և պէտք է գրել և որոնց ը. դրա համար որոշ կանոն չկալ. ներդաշնակութիւնը պահանջում է մի տեղ ը գրել, մի ուրիշ տեղ, ընդհակառակն, և. սովորաբար ձալնաւոր տառով սկսող բառերից առաջ և է գրւում. բաց սա ընդհանուր կանոն չէ, որովհետեւ երբ երկու բառերը բաժանւած են որ և է կէտով, գրւում է ը. օր. չարունակիլ տուր կտրգալը, և կը տեսնես. ձալնաւորից առաջ՝ և ոչ և. ինչպէս պ. Ղուկասեանն է գործածում. պատճառն, որ... ձալն, որ չարծում էր. Վերջակէտերից առաջ միշտ ը. Աւելորդ է սորանց համար օրինակներ բերել աշխարհաբառ Նղիշէից. բաւական է ասել, որ կարգալիս ընթերցողը պէտք է միշտ և տառն արտասանէ, որից և ընթերցանութիւնը ծանր է դնում, և, առհասարակ, գրւածքը կորցնում է սահունութիւնը.

Լ՛ Երբէն Ղ. Երբէն